ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9785/02/24 ք. Երևան
22 Նոյեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Լայթսպորտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» ծածկագրով պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 13.09.2024 թվականին տրված թիվ 01 համարի եզրակացությունն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի՝ խնդրելով՝

1. Վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, այն է՝

անվավեր ճանաչել (վերացնել) Ապարանի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» ծածկագրով պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Սմբատ Հովհաննիսյանի կողմից 13.09.2024թ.-ին տրված թիվ 01 համարի եզրակացությունը,

2. Որպես հետևանք՝ պարտավորեցնել Ապարանի համայնքապետարանին ընդունելու Ապարանի համայնքապետարանի և «ԼԱՅԹՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության միջև 05.04.2024թ.- ին կնքված թիվ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» պայմանագրով նախատեսված՝ «ԼԱՅԹՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքները:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 19.11.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/9785/02/24 քաղաքացիական գործը, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **19.11.2024 թվականին**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված

հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանից պետք է պահանջել «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Լայթսպորտ» ՍՊԸ-ի ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի՝ «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» ծածկագրով պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 13.09.2024 թվականին տրված թիվ 01 համարի եզրակացությունն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանից պահանջել դատարան ներկայացնել «ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-12/24-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am